



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

360
11/11

373 [ԵԵՍ. 77]

4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Պ Ր Ո Ց Ի Ն

Տ Փ Ի Մ Ո Յ .



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ .

1877

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿԵՐ .

Տ Փ Ի Մ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԻՖԼԻՍԻ

Дозволено Цензурою. Тифлисъ. 8 Сентября 1876 г.

Старший Цензоръ Меликъ-Мейрабовъ.

370
2003-44

MAR 2010
Հ.Ա.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Ր.Ա. ՇՊՈԼԻՑԿԱՅԱ ԲՈՒԼՎԱՐԴ
7/31 1922
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏԻՖԼԻՍԻ ԶԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

373 (ՆԵՐՍ. 79.)

Գ Լ Ո Ւ Խ Ա.
Կ-21

Հիմնական նախագիծը Տիֆլիսայ Հայոց Ազգային Հոգևոր Ներսիսեան Գարոցի, պարունակեալք ի կոնդակի վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Մատթէոսի յԹ-ն յունիսի 1861 ամի համարաւ 327.

1004
1561

Արդիւնք թիֆլիզոյ Հայոց ազգային Հոգևոր Ներսիսեան Գարոցի, որք մտանեն ի նմա մինչև ցայժմ, կամ որք մտանելոց են յայսմհետէ ի կայից, ի դրամագլխոց, յընծայարեբութեանց, ի կտակաց և յայլոց աղբերաց, պարտին մնալ մշտապէս անձեռնմխելի սեպհականութիւն նորին, և ի գործ զնիլ ի պայծառութիւն և ի յառաջադիմութիւն կրթութեան մանկանց Հայոց:

Ի Երջան թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Գարոցի, վերաբերութեամբ թուոյ ուսանողաց և աւանդեալ առարկայից, պարտի ընդարձակիլ ըստ չափու եկամտից նորին:

Ամենայն մանկունք Հայոց, որք մտանեն ի թիֆլիզոյ Հայոց Ազգային Գարոցն, ունին ստանալ ի նմա զուսումն ձրիաբար, իսկ անտերունչ որքք Հայոց, առաւելապէս յեկեղեցականաց, պարտին մնանիլ ի նոյն իսկ ուսումնարանի ծա-

խուք նորին, և այնոցունց ի նոցանէ՝ որք աւարտեալ զընթացս ուսման բարեբարոյութեամբ և զերազանց ընդունակութեամբ ցանկանայցեն կատարելագործիլ ի բարձրագոյն ուսումնարանս, սուեալ լինին առ այն օժանդակութիւնք ի գումարաց Գպրոցին ըստ չափու կարելութեան, նախընթաց զիտութեամբ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց և Սինօղի Սրբոյ Էջմիրածնի:

Ի թուոյ ուսանողաց Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Գպրոցի կարեն մտանել ի Հոգևոր կոչումն միայն այնոքիկ, որք ըստ բնութեան իւրեանց և ներքին կոչման կարող են լինիլ արժանի սպասաւորք աստուածային սեղանոյ և որք յայտնեսցեն առ այն զյօժարակամ ցանկութիւն իւրեանց, առանց իրիք ստիպմանց և համոզմանց:

Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Գպրոցն պարտի լինիլ միշտ ի լիակատար կախման ծայրագոյն Պատրիարզ Կաթողիկոսի և Սինօղի Սրբոյ Էջմիրածնի: Վիճակաւոր Արք Եպիսկոպոս սեղւոյս պարտի մնալ միշտ ըստ կոչման իւրում առաջին հոգատար և նախագահ խորհրդարանի կառավարութեան Գպրոցին, իսկ այլ անդամք այնր խորհրդարանի պարտին ընտրիլ ի ձեռն հասարակութեան քաղաքիս, ըստ յայտնի արժանաւորութեանց իւրեանց, առանց զանազանելոյ զեկեղեցականս և զաշխարհականս և հաստատիլ ի ծայրագոյն Կաթողիկոսէն ամենայն Հայոց: Թիւ Հոգաբարձուաց կամ Անդամոց խորհրդա-

րանի պարտ է լինիլ, ընդ նախագահութեամբ վիճակաւորի, ևր կոտասան:

Գ Լ Ո Ի Թ Բ.

Իշխանութիւն և կառավարութիւն
Ուսումնարանին.

Յօդուած 1.

Ծայրագոյն Պատրիարզ Կաթողիկոսն ամենայն Հայոց և Սինօղն Սրբոյ Էջմիրածնի իրրև աւանդապահ Հայոց Եկեղեցոյ, զիտող բարեբարոյութեան և հոգատար իսկական հոգևոր լուսաւորութեան իւրում ժողովրդեան, ունին ընդ լիակատար տեսչութեամբ իւրեանց զազգային Հոգևոր Ներսիսեան Գպրոցն Տիֆլիսայ:

Յօդուած 2.

Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց և Սինօղն Սրբոյ Էջմիրածնի, պահպանելով ընդ հովանաւորութեամբք իւրեանց զնորհեալս կոնդակաւ Նորին Վեհափառութեան յ9 յունիսի 1861 ամի համարաւ 327 Տիֆլիսայ Հոգևոր Ներսիսեան Ազգային Գպրոցին զիրաւունս և զհիմնաւորութիւնս մշտապէս անփոփոխելի ըստ բարեհաճ նկատողութեան նոցա և կամ զիջանկելով ընդ առաջարկութիւնս կառավարութեան Գպրոցին համաձայն ժամանակի, հանգամանաց և կարողութեան Գրպ-

րոցին , թողատրէ զընդլայնումն և զկատարելագործութիւն նորին :

Յօդուած 3.

Նորին Վեհափառութիւնն արժանի առնէ հաւանութեան և հաստատութեան զբոլոր անդամս Հոգաբարձութեան Վրպրոցին , զորս ընտրեն պատգամաւորք հասարակութեան Հայոց Տփխիսայ : Հաստատէ նոյնպէս և զՏեսուչ Վարոցի , որ ընտրի ի Հոգաբարձութենէ նորին :

Յօդուած 4.

Հոգաբարձութիւն Վարոցի , ըստ ընտրութեան թեմակալ Առաջնորդի , կարգէ ուսուցիչս հայոց հոգևոր ուսմանց , և զայնմանէ յայտնէ Վեհափառ Վաթողիկոսին ի ծանօթութիւն . իսկ ի դէպս անհամաձայնութեան կարծիք իւրաքանչիւրոցն առաջարկին ի սնօրէնութիւն Վեհափառ Վաթուղիկոսի ամենայն Հայոց :

Յօդուած 5.

Հոգաբարձութիւն Վարոցին կարգէ և արձակէ ըստ իւրում նկատողութեան զուսուցիչս լեզուի և պատմութեան Հայոց : Իսկ դասական գրեանք սոյն առարկայից , նոյնպէս և հոգևոր ուսմանց , ենթարկին նախընթաց զննութեան և հաստատու-

թեան Սինօղին Սրբոյ Էջմիածնի ըստ առաջարկութեան խորհրդարանին Հոգաբարձութեան :

Յօդուած 6.

Չկամաց Նորին Վեհափառութեան և Սինօղի կախի լուծումն առաքելոյ զգերազանցեալ որդիգիրս վասն կատարելագործութեան ի բարձրագոյն ուսումնարանս ի հաչիւ Վարոցին :

Յօդուած 7.

Սինօղն վերադննէ , ենթարկէ ստուգութեան և եղրափակէ զամենայն հաչիւս Վարոցին ըստ ամենայն ուսումնական և արնասական մասանց :

Յօդուած 8.

Թեմակալ Առաջնորդն Հայոց Տփխիսայ է առաջին Հոգաբարձու Վարոցին , ունկով զիրաւունս հասու լինելոյ ամենայն ներքին և արտաքին հանգամանաց Նորին . բայց չառնելով ինքնին զոր և իցէ սնօրէնութիւն , դարձուցանէ զմտադրութիւն Հոգաբարձութեան Վարոցին ի նկատեալ յինքենէ առարկայն :

Յօդուած 9.

Նախագահ Հոգաբարձութեան Վարոցին իբրև վիճակաւոր

Առաջնորդ թեմին, որոյ տեսչութեան ստորադրին բոլոր ծխական ուսումնարանք Հայոց թեմին, ի հարկաւոր դասեցեալ զէսս հրաւիրէ զանդամս Հոգաբարձութեան, հոգալ զբարեկարգութենէ նոյն ուսումնարանաց և օժանդակել նոցին կախեալ ի Հոգաբարձութենէ միջոցօք:

Կառավարութիւն Գալրոցին.

Յօդուած 10.

Հոգաբարձութիւն Գալրոցին ընդ նախագահութեամբ թեմակալ առաջնորդին կազմի յերկոտասան անդամոց, որք և հաստատին ի Պատրիարկ Կաթողիկոսէ ամենայն Հայոց: Տեսուչ Գալրոցին է նոյնպէս անդամ Հոգաբարձութեան. մին ի Հոգաբարձուաց վարէ զպաշտօն գանձապետի ըստ ընտրութեան Հոգաբարձութեան:

Յօդուած 11.

Ընտրութիւն բոլոր Անդամոց Հոգաբարձութեան Գալրոցին լինի ի ձեռն պատգամաւորաց Հայոց Տփխիսայ յետագայ կարգաւ. ժողովուրդք իւրաքանչիւր եկեղեցեաց Հայոց Տփխիսայ ըստ ծանուցման թեմակալ Առաջնորդին, ժողովելով յեկեղեցիս, ընտրեն զերկս պատգամաւորս ի միջոց իւրեանց, որք և ի նշանակեալ ժամանակի ժողովեալ ի դահլիճ Գալրոցին, ձեռն արկանեն ընտրել քուէարկութեամբ չորսամեայ Վժամանակաւ,

ըստ նախընթաց համաձայնութեան քուէարկել ի անձանց, զերկոտասան անդամս Հոգաբարձութեան վասն կառավարութեան Ուսումնական և Տեսուական մասանց Գալրոցին և զչորս կանգիդատս անդամոց: Տեսուչ Գալրոցին ընտրի ի Հոգաբարձութենէն և հաստատի ի պատրիարկ Կաթողիկոսէ ամենայն Հայոց անորոշ ժամանակաւ:

Յօդուած 12.

Ի պակասիլ անդամոց Հոգաբարձութեան զտեղի նոցա ունին կանգիդատք (տեղակալք). իսկ ի զէսս պակասելոյ կանգիդատաց, ընտրին նոր անդամք Հոգաբարձութեան ի ձեռն նոյն իսկ պատգամաւորաց հասարակութեան, որք և պահեն զիրաւունս իւրեանց յընթացս չորից ամաց:

Յօդուած 13.

Յանդամոց Հոգաբարձութեան միայն Տեսուչն ստանայ զըռճիկ ըստ սահմանեալ ցուցակի (չտատ):

Յօդուած 14.

Հոգաբարձութիւն Գալրոցին ունի զառանձին ղլւանատուն բաղկացեալ ի քարտուղարէ, որ և է հաշուապահ և յերկուց զրազրաց:

Յօդուած 15.

Հոգաբարձութիւնն ունի ընդ տեսչութեամբ իւրով զա-

մենայն առարկայս արտաքին և ներքին մասանց Գպրոցին:

Յօդուած 16.

Պարտաւորութիւնք նորա են՝

Ա. ըստ ուսումնական մասին՝

1. Կազմութիւն կամ վերազննութիւն ձևոյ ընթացից ուսման և բաժանումն այնոցիկ ըստ դասատանց:

2. Կազմումն կամ վերազննութիւն դասական գրեանց վասն աւանդելի առարկայից ի Գպրոցին, բաց ի գրեանց Հայոց լեզուի և կրօնագիտութեան, որք ենթարկին զնոսութեան Սինօզին:

3. Կարգել և արձակել զամենայն ուսուցիչս իւրով իշխանութեամբ բաց ի յիշատակելոց ի 4-րդ յօդուածն, զորոց զիմէ առաջարկութեամբ առ Վեհափառ Կաթողիկոսն և ի Սինօզն Սրբոյ Էջմիածնի:

4. Ընդունել զաշակերտս ի դպրոցն, այն է զորդեգիրս, զթոշակաւորս և զերթեկէս, արժանաւորել զնոսա բարձրացուցանելոյ ի ստորայնոց ի վերին դասատունս, արձակել զնոսա ի դպրոցէն յետ աւարտելոյ զընթացս ուսման կամ յառաջ քան զայն, տալ զատեստատս և զվկայագիրս արձակեալ աշակերտաց:

5. Կազմել զմատենագարան և զհանդիսարան բնական գիտութեանց վասն Գպրոցին:

6. Առաջարկել առ Սրբազնագոյն Կաթողիկոսն զհաշիւս

ըստ ուսումնական մասին Գպրոցին:

Բ. Ըստ տնտեսական մասին:

1. Կազմել, վասն վերազննելոյ, զտարեկան պատկերս ծախսոց (ամետա) մտից և ելից Գպրոցին:

2. Տնօրէնութիւն վասն ստացման արդեանց:

3. Բաժանել զծախս ըստ առարկայից:

4. Առնել զաճուրդս վասն տակոյ զկալուածս Գպրոցին կապալաւ:

5. Առնել զաճուրդս վասն հանդերձելոյ կամ հասուցանելոյ զհարկաւորեալ առարկայս վասն Գպրոցին և կալուածոց նորա:

6. Լուծումն վասն ի ձեռս բերելոյ զառակայս կարեւոր վասն Գպրոցին, որք ոչ ենթարկին աճրդի:

7. Ձննել զհաշիւս մտից և ելից Գպրոցին և կալուածոց նորա, և առաջարկել ի Սինօզն Էջմիածնի զընդհանուր հաշիւ ըստ տնտեսական մասին:

Յօդուած 17.

Ի Հոգարարձութեան քննին և վճռին ամենայն խնդիրք և գործք ըստ ուսումնական մասին և տնտեսականին առաւելութեամբ ձայնից, և գրին յօրագրի ընդ ստորագրութեամբ ներկայ գտեալ անդամոց, որոց թիւ չիցէ պակաս քան զկէսն:

Յօդուած 18.

Անդամք Հոգարարձութեան Գպրոցին արարտին առշուշտ

միանգամ յեօթնեկի ժողովիլ ի նմա: Իսկ ի դէպս կարևորս կազմել և զառանձին ժողով, և որք չկարիցեն ներկայանալ ի Հոգաբարձութիւնն, պարտաւոր են ազը առնել զայնմանէ գրով Հոգաբարձութեան:

Յօդուած 19.

Թեմակալ Առաջնորդն Հայոց Տփխիսայ ըստ կոչման իւրում է նախագահ հողերո զպրոցին իրաւամբ մի և կէս ձայնի ըստ ամենայն ընդհանուր գործոց և հարցմանց, որք պարտին վճուիլ առաւելութեամբ ձայնից: Իսկ ըստ ինչորոց վասն առհասարակ Հայոց կրօնական ուսմանց, վասն պատմութեան և լեզուին, նա ունի զիրաւունս զաղարկեցուցանելոյ զմիաձայն եզրակացութիւն անդամոց Հոգաբարձութեան, պահանջելով, զի Հոգաբարձութիւնն առաջարկեսցէ զայնց ի վճռահատութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսի և Արևոզի:

Յօդուած 20.

Թեմակալ Առաջնորդն տեղւոյն, ի բացակայիլ իւրում ի քաղաքէն, նշանակէ ըստ նկատողութեան իւրում զմին յանդամոց Կոնսիստորին ի կատարումն իւրոյ պաշտօնի ըստ պարտաւորութեան Նախագահի Գպրոցի, և զայնմանէ ծանուցանէ Հոգաբարձութեանն գրով:

Յօդուած 21.

Իւրաքանչիւր անգամ ունի իրաւունս վերահասութեան

ամենայն մասանց Գպրոցին, բայց չառնելով ինչ յանձնէ իւրմէ ըստ նկատեալ թերութեանցն, հասուցանէ զայնց ի գիտութիւն Հոգաբարձութեան:

Յօդուած 22.

Տեսուչն Գպրոցին իրրև անգամ կառավարութեան պարտաւոր է՝ հասու լինիլ վասն կատարելոյ ամենայն ուսուցչաց և վերակացուաց զիւրեանց պարտաւորութիւնս, ճիշդ նկատել ի վերայ բարոյականութեան բոլոր աշակերտաց: Յամենայն աւուր հասու լինի ներքին կացութեան Գպրոցին, վասն լաւութեան կերակրոց, մաքրութեան հանդերձից և այլոց հանգամանաց նոցա և զնկատեալ պակասութիւնս յուսումնական և ի տնտեսական մասին ընուլ անձամբ, իսկ ի դէպս զժուարանալոյն, ազը առնել Հոգաբարձութեան գրով կամ բանիւ ի տնօրէնութիւն նորա:

Յօդուած 23.

Ընդունելութիւնն, պահպանութիւն և ծախք գումարաց և հաշուատուութիւն նոցա առաջի Հոգաբարձութեան, են պարտաւորութիւն զանձապահի:

Յօդուած 24.

Վասն զարմանելոյ զհիւանդս յորդեգրաց և ի թոշակաւորաց Գպրոցն ունիցի զառանձին հիւանդանոց և զբժիշկ:

Յօդուած 25.

Մին ի Հոգաբարձուաց, ըստ նշանակելոյ ժողովոյ Հոգաբարձութեան, պարտի միւսմանայ ժամանակաւ յամենայն աւուր ներկայանալ ի գիւմնատուն Հոգաբարձութեան, ստանալ ըզթուղթս և դժբարս, մտեալս յանուն Հոգաբարձութեան և տալ պատրաստել ըստ այնց զեկուցումն ի լուր ժողովոյ Հոգաբարձութեանն: Իսկ զգրամատեան ծրարս ստանայ յատկապէս գանձապահն և մուծանէ ի պատկանաւոր մատեանս ըստ հրամանապրութեանց Հոգաբարձութեանն:

Յօդուած 26.

Գանձապահի ստորադրի անտեան, որ կարդի վասն գնելոյ զկերակուրս և զղղնլիս որդեգրաց, վասն հսկելոյ ի վերայ մաքրութեան հանգեթից, անխողոց և ննջարանաց նոցա և վասն ամբողջութեամբ պահպանելոյ դամենայն շարժական կայս Գըսարոցին և տայ զհաշիւս յամենայնի գանձապահին:

Գ Լ Ո Ի Խ Գ.

Ընթացք ուսման:

Յօդուած 27.

Ի վերայ հիման կոնդակի Սրբազնազոյն Կաթողիկոսի յ9 յունիսի 1861 ամի № 327, բոլոր հայազլի մանկունք, որք

մտանն ի Տիփլիսայ Հայոց Ազգային Հոգևոր Գորոցն Ներսիսեան, ստանան ի նմա դուստմն ճրխարար: Իսկ աղքատիկ որք Հայոց, յատկապէս յորդոց հոգևորականաց, պարտին սնանիլ ի նոյն իսկ Գալրոցին ծախիւք ուսումնարանին:

Յօդուած 28.

Ի Գալրոցն ընդունին և թոշակատու աշակերտք, որք ի հաշիւ ծնողաց և բարեբարաց ընակին և սնանին ի Գալրոցին հաւասար որդեգրաց:

Յօդուած 29.

Ընթացք ուսման Գալրոցին պարտի լինիլ հաւասար այնմ, որ սեպհականեալ է հոգևոր գալրոցաց կամ միջնակարգ ուսումնարանաց, նախագասելով զհայոց հոգևոր ուսմունս, որպէս զի ի միջոց ուսանողաց ելցեն բարեկիրթ և արժանաւոր պաշտօնեայք եկեղեցեաց Հայոց և ուսուցիչք վասն ծխական և զիւզական ուսումնարանաց:

Յօդուած 30.

Աշակերտք ընկալեալք ի Գալրոցն՝ պարտին ունիլ սչ պակաս քան զինն և սչ առաւել քան զերկոտասան ամս վասն մտանելոյ յառաջին դասատուն: Առաւել քան զայն հասակաւորն ընդունել ըստ չափու ուսմանն ի բարձրագոյն դասատունս: - *Կաթողիկոս*

Յօդուած 31.

Աշակերտք ընկալեալք ի դպրոցն՝ պարտին լինիլ առողջակազմ մարմնով, որոյ վասն նոքա ենթարկին բժշկական զննութեան ի ներկայութեան Հոգաբարձութեան Գպրոցին:

Յօդուած 32.

Ընդունելութիւն մանկանց ի Գպրոցն լինի ի տարին միանգամ յամսեանն Օգոստոսի:

Յօդուած 33.

Գպրոցն ունի զլեց դասատունս բաց ի նախապատրաստականէ:

Յօդուած 34.

Օխական ուսումնարանք, որ ի քաղաքին Տիլիսիայ, ենթադրին անմիջապէս տեսչութեան Հոգաբարձական խորհրդարանին:

Յօդուած 35.

Աշակերտք կարեն մնալ զամ մի յիւրաքանչիւր դասատան, կարեն լինիլ և բացառութիւնք ըստ պատճառանաց, զորս յարգելի դոցէ Հոգաբարձութիւնն Գպրոցին:

Յօդուած 36

Սուարկայք ուսմանց են՝

Նախ հոգեոր ուսմունք՝ որք են.

Սրբազան պատմութիւն հին և նոր կտակարանաց. Քրիստոնէական վարդապետութիւն հանդերձ մեկնութեամբ ծիսից և արարողութեանց Հայաստանեայց ուղղափառ սուրբ եկեղեցւոյ. Պատմութիւն եկեղեցւոյ Հայոց և ազգային ժողովոց: Լեզու Հայոց և պատմութիւն գրականութեան. Ռուսաց լեզու և գրականութիւն. Գաղղիացւոց լեզու և գրականութիւն. Լատինացւոց լեզու: Գիտութիւնք. Մատեմատիկայ. Ազգային պատմութիւն. Ընդհանուր պատմութիւն. Պատմութիւն Ռուսաց. Աշխարհագրութիւն Հայաստանի և Ռուսաստանի. Ընդհանուր աշխարհագրութիւն, Բնագիտութիւն. Բնական պատմութիւն և առանձին բժշկականութիւն: Արուեստք. վայելչագրութիւն, նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն.

Յօդուած 37.

Յուսումնական մասին տնօրէնութիւնն ուսմանց և ժամուց ի դասատունս յանձն լինի ուսումնական խորհրդարանին և հոգատարութեան Հոգաբարձութեանն:

Յօդուած 38.

Գպրոցն ունիցի զուսումնական խորհրդարան ընդ նախա-

դահութեամբ տեսչի, բոլոր ուսուցչաց, և վերակացուաց վասն նախընթաց կառավարութեան կարգի և կշանակի ուսուցանելոյ դարձնեստ և հսկելոյ ի վերայ նոցա:

Յօդուած 39.

Ուսումնական խորհրդարանին պատկանին.

1, Յուցանել զգասական զրեանս և զՆարս կազմելոյ զնոսա կամ ի ձեռս բերելոյ:

2, Բաժանել զառարկայս ուսմանց ըստ ժամանակի և ըստ կարգի ուսուցանելոյ զայնս, նկատմամբ յառաջադիմութեանց, ստացելոյ ի դասատունս:

3, Նշանակել զժամանակս պատրաստութեան դասուց, զկարգ հարցաքննութեանց, զգնահատութիւն հմտութեանց աշակերտաց, արժանի առնել զնոսա փոխիլ ի բարձր դասատունս կամ արձակելոյ զնոսա վասն անընդունակութեանց:

4, Յուցանել զզրեանս վասն զբաղարանի զպրոցի, նոյնպէս և զառարկայս կարևորս վասն հանդիսարանի բնական գիտութեանց, նա և ցուցանել զկշանակ և զՆար ի ձեռս բերելոյ զայնս:

Յօդուած 40.

Ուսումնական խորհրդարանն ժողովի ըստ հրահրման տեսչի: Ամենայն զիտողութիւնք նորա ի ձեռն նոյն իսկ տեսչի առաջարկին ի վերադիմութիւն Հոգաբարձութեան զպրոցին և ըստ վճար սորին ամին ի կատար:

Յօդուած 41.

Ընդհանուր տարեկան հարցաքննութիւնք աշակերտաց վասն ուսեալ առարկայից նոցա լինին միանգամ ի տարին ի 1-ն յունիսի ցվերջն, զորմէ նախընթացաբար ծանուցանի ի լուր ամենեցուն ի 1-ն Մայիսի յայտարարութեամբ, որ պարունակեսցէ յինքեան զհաստատեալն ի Հոգաբարձութենէ Վարոցին զսահմանադրութիւն կարգի և քննութեան առարկայից:

Յօդուած 42.

Մրցանագիրք (Ատեստատք) վասն աշակերտաց աւարտողաց զընթացս ուսման ի Վարոցին և վկայական վասն արձակելոյ նախ քան զաւարտումն ուսման պատրաստին ի Հոգաբարձութենէ նկատմամբ հարցաքննական ցուցակաց, տարեկան թուանշանաց, որոց արժանացեալ են աշակերտք ըստ ուսման և ըստ վարուց:

1004
1922



Ի վերայ հիման Կոնդակի Մրցանագրոյն Կաթողիկոսի 19 յունիսի 1861 ամի ամենայն արդիւնք Տփլիսայ Հայոց Ներ-

սիսեան աղղային հոգևոր Գպրոցին, որք մտաննն ի նմա մինչև ցայժմ, կամ որք մտանելոց են յայսմհետէ ի կայից, ի դրամազլլոց, յընծայարեութեանց, ի կտակաց և յայլոց աղբերաց, պարտին մնալ մշտապէս անձեռնմխելի սեպհակա-նութիւն նորին, և ի գործ դնիլ ի պայծառութիւն նորա և ի յառաջադիմութիւն կրթութեան հայազղի մանկանց:

Յօդուած 44.

Յղեալ ցարդ արդիւնք Գպրոցին, որք նշանակեալ են ի ցուցակի Հոգաբարձութեան նորին, են. 1. արդիւնք ստացեալք յանշարժ կալուածոց, պատկանելոց Գպրոցին: 2. Արդիւնք ստացեալք յուխտատեղեաց եղելոց առ Տփլիս քաղաքաց Այս արդիւնք սեպհականեցան Գպրոցին կոնդակաւ Սրբազնագոյն Կաթողիկոսին Ներսիսի յ9 Մարտի 1851 ամի:

3. Արդիւնք ստացեալք ի վաճառոյ մոմոց թիֆլիզոյ Հայո-եկեղեցեաց: Այս արդիւնք ևս սեպհականեցան Գպրոցին վերոյնշանակեալ կոնդակաւ Կաթողիկոսին Ներսիսի:

4. Արդիւնք ստացեալք յինչ ինչ ուխտատեղեաց Հայոց, որ ի սահմանս Վրաստանի և Իմերեթիոյ, նաև ի վաճառոյ մոմոց ի նոյն տեղիս:

5. Ժամանակաւոր ընծայարեութիւնք:

6. Մուտք ստացեալք ի վճարէ թոշակատու որդեկրաց:

Յօդուած 45.

Ամենայն արդիւնք յիշատակեալք ի նախընթաց յօդուածս

պարտին մտանել ամբողջութեամբ ուղղակի ի գանձարան Գպրոցին թիֆլիզոյ:

Յօդուած 46.

Հոգաբարձութիւն Գպրոցի պարտ է կաղմել և պահպանել գմատեան ամինայն անշարժ կայից Գպրոցին, յորում գրեցեն ժամանակադրական կարգաւ ի ձեռս բերելն, մտանելն այնոցիկ ընդ տեսչութեամբ ուսումնարանին, կամ շինութեան յօգուտ Գպրոցին ցուցանելով միանգամայն և զգրաւոր վկայագիրս ի վերայ հիման որոց իւրաքանչիւր կալուած մտեալ է կամ ի նորոյ մտանելոց է ի սեպհականութիւն Գպրոցին:

Յօդուած 47.

Հոգաբարձութիւն Գպրոցին տայ գանձապետի իւրում զհարկաւոր հաշուետումարս յիւրաքանչիւր ամի, զմին ընդհանուր բոլոր առ հասարակ արդեանց և զայլ ըստ իւրաքանչիւր աղբերց արդեանց առանձինն:

Յօդուած 48.

Ամինայն անշարժ կալուածք Գպրոցին պարտին տուեալ լինիլ կապալաւ յաճուրդս, նշանակեալս ի Հոգաբարձութենէ Գպրոցին հանդերձ անշուշտ պայմանաւ, զի կապալաւուռն պահպանեսցէ զայնս միշտ ի լիակատար բարեկարգութեան:

Յօդուած 49.

Չարդիւնս յանշարժ կալուածոց Գպրոցին ստանայ Հոգաբարձութիւնն ի կապալառուէն ըստ ժամանակաց, նշանակելոց ի դաշնագիրս, գանձապահ Գպրոցին գրէ դայնս ի պատշաճեալ մատենանս և վասն ստացման այնոցիկ տայ դանդորդագիր:

Յօդուած 50.

Արդիւնք Գպրոցին ստացեալ յուխտատեղեաց, շուրջ զՏփիսիսաւ եղելոց, ժողովին ի ձեռն նշանակեալ ի նոսա ի վիճակաւոր Առաջնորդէն ըստ խնդրոյ Հոգաբարձութեանն Գպրոցին արժանաւոր քահանայից և հարադատ երեցփոխանաց և յաշխարհական անձանց ըստ ընտրութեան տեղական բնակչաց, և իւրաքանչիւր ուխտատեղեաց տայ Հոգաբարձութիւնն Գպրոցին հաշուեմատեան, յորում քահանայն ընդ երեցփոխանին մուծանէ զարդիւնս ի նոյն իսկ ժամու մտանելոյ այնոցիկ, զորս և յիւրաքանչիւր ամիս հասուցանէ առ գանձապահ Գրպրոցին ստորագրութեամբ նորա ի նոյն իսկ մատենի վասն ստացման այնոցիկ:

Յօդուած 51.

Արդիւնք Գպրոցին ի վաճառմանէ մոմոց Տփիսիսայ Հայոց եկեղեցեաց մտաննս ամբողջութեամբ ի Հոգաբարձութիւնն ըստ յարմարադատ տնօրէնութեան նորին: Իրաւունք վաճառ-

ման այնոցիկ մոմոց ի գլխաւոր պահարանին և յերկուս կըրպակս առ Սուրբ Սարգիս և առ սուրբ Աստուածածին (Կաթողիկէ) եկեղեցեօք ևն այնոքիկ, որ այժմ գոն ի նոյն կըրպակս և որք ունին նշանակիլ ի դաշնագրին յականէ յանուանէ:

Յօդուած 52.

Գումարն պատկանեալ Գպրոցին ի վաճառոյ մեղրամոմոց պարտի հասանել ի պայմանեալ ժամանակս առ գանձապահ Գպրոցին, որ գրելով դայնս ի պատշաճաւոր մատենին տայ դանդորդագիր վասն ստացման այնոցիկ:

Յօդուած 53.

Արդիւնք Գպրոցին ի մանր վաճառմանէ մոմոց յեկեղեցիս Հայոց քաղաքիս մեան ի նոյն իսկ յեկեղեցիս այնու, զի այնոքիկ ի կիր արկցին վասն բանալոյ և պահպանելոյ առ նոքօք զծխական ուսումնարանս և առ ի պատրաստելոյ զմանկունս վասն մտանելոյ ի Գպրոցն Թիֆլիզոյ:

Յօդուած 54.

Ամենայն դրամական ընծայաբերութիւնք յօգուտ Գրպրոցին, որոց նշանակութիւնք չեն յատկացուցեալք յընծայատուէն, պարտին համաթուլլ ընդ մայր դումարաց Գպրոցին և տուեալ ինիլ յաճումն տոկոսեօք յարքունի գանձարան ևս կամ հաւատարիմ դրամատեարց և կամ գնել զանշարժ կալուածս յօգուտ Գպրոցին:

Յօդուած 55.

Ամենայն ժամանակաւոր ընծայարեւութիւնք յօգուտ
Գպրոցին, թէ դրամականք և թէ նիւթականք յատկացուցեալ
նշանակութեամբ յընծայատուէն պարտին ի գործ դնիլ ըստ
նշանակութեան ընծայատուին:

Յօդուած 56.

Ծնողք կամ բարերարք թոշակաւոր աշակերտաց պար-
տին հատուցանել ի տարին հարիւր յիսուն մանէթս արծաթոյ:

Յօդուած 57.

Մուտք ի վճարէ թոշակատու աշակերտաց պարտին մտա-
նել ուղղակի ի Գպրոցն յերկուս նուազս ի տարին անշուշտ
ամսեան Յունվարի և Յուլիսի, զորս ստացեալ զանձապահն
մուծանէ ի պատշաճաւոր մատենան, և տայ կամ առաքէ առ
վճարողս այնոցիկ զրամոց զանդորրազիր:

Յօդուած 58.

Վասն անընդհատ հսկողութեան ի վերայ ամենայն աղբե-
րաց արդեանց, և վասն անվրէպ մտանելոյ այնոցիկ ի գանձա-
րան Գպրոցին, Հոգարարձութիւնն նորին նշանակէ ինքնին
ընդ տեսչութեամբ անդամոց ըստ տնտեսական մասին և գան-
ձապահի Գպրոցին զգործակալս (Կօմիսար) հատուցանելով
զվարձ վաստակոց նոցա:

Յօդուած 59.

Ամենայն արդիւնք Գպրոցին յամենայն վերողրեալ աղ-
բերաց առանց բացառութեան պարտին մտանել ի գանձարանն
Գպրոցին ամբողջութեամբ և առանց ձեռն մխելոյ: Արդեւեալ
լինի ամենատեսակ ծախսարարութիւն ի ժողովեալ արդեանց
նաև սակաւաքանակ կիրառութեամբ վասն շինութեան,
կարկատանաց և կամ բարդաւաճելոյ զայնոսիկ աղբիւրս ա-
ռանց վճուոյ Հոգարարձութեան:

Գ. Լ. ՈՒՒ Ե.

Ծախք Գպրոցին:

Յօդուած 60.

Ի վերայ հիման կոնդակի վեհափառ Կաթողիկոսին յԳ-էն
յունիսի 1861 ամի համարաւ 327, ամենայն արդիւնք Տփլիսի-
սայ Հայոց Աղգային Հողերո Ներսիսեան Գպրոցին պարտին ի
գործ դնիլ յօգուտ նորա:

Յօդուած 61.

Համաձայն այսր նպատակի հոգարարձութիւն Գպրոցին
կազմէ ի բարեպատեհ յամենակի զպատկեր ծախուց Գպրոցին
վասն առաջիկայ ամի համեմատութեամբ մտից անցեալ ամի:

Յօդուած 62.

Ի կազմին զպատկեր ծախուց պարտ է նախապէս ապա-

հովել զկարևորագոյն պիտոյս Դպրոցին և ապա հողալ զայլոց բարդաւածութեանց և յարմարութեանց նորին:

Յօդուած 63.

Առաջին պիտոյք Դպրոցին են՝

1. Պահպանութիւն տան Դպրոցին և ապահովութիւն նորա:
2. Պահպանութիւն ի բարեկարգութեան ամենայն անչարժ կալուածոց Դպրոցին և ապահովութիւն նոցա:
3. Ուժիկ ուսումնական կառավարութեան:
4. Ուսումնական պիտոյք:
5. Պահպանութիւն այժմեան թուոյ որդեգրաց. յորոց երեսունք պահպանին ի հաշիւ Դպրոցին:

Առարկայք բարդաւածութեան Դպրոցին են՝

1. Նոր շինութիւն կամ յաւելուած ի շինուածս կամ ի կալուածս Դպրոցին:
2. Յաւելումն թուոյ որդեգրաց:
3. Գրադարան:
4. Թանգարան բնական գիտութեանց:
5. Դաստակերտ վասն գիւղական Տնտեսութեան:
6. Առաքումն ի բարձրագոյն ուսումնարանս գերազանցեալ որդեգրաց, աւարտողաց զընթացս ուսման:

Յօդուած 64.

Ամենայն ծախք Դպրոցին ըստ ամենայն մասանց պարտին լինիլ վճռով Հոգաբարձութեան նորին:

Յօդուած 65.

Հոգաբարձութիւն Դպրոցին տայ դանձապահին զհաշուէմատեանս վասն վերոյիշատակեալ հնգից առաջնակարգ պիտոյից Դպրոցին, յորս պիտոյ է մուծանել, ըստ պատկանելոյն, զամենայն տուեալ դումարս ստորագրութեամբ ստացողաց:

Յօդուած 66.

Ուժիկք անձանց ուսումնական կառավարութեան և Գլուանատան Դպրոցին են յետագայք՝

Տեսչի Դպրոցին ի տարին	1200	ռ.
Տնտեսի Դպրոցին	300	„
Քարտուղարի Հոգաբարձութեան, որ կատարէ նաև զպարտաւորութիւն հաշուապահի	500	„
Ուսուցչաց վերին երեք դասատանց առ իւրաքանչիւր դաս մի և կէս ու ուր ի, իսկ ի ստորին երեք դաստունս և նախապատրաստականին մի ու ուր ի		
Բժշկին	200	„
Միոյ աւագ վերակացուի	500	„
Նրից վերակացուաց իւրաքանչիւրոցն	300	„
	<hr/>	
	900	„

Երկուց զբազրաց առ մին մին	$\frac{100 \text{ ր.}}{200 \text{ ր.}}$
Երկուց մանկածուաց առ իւրաքանչիւրն	$\frac{100 \text{ ր.}}{200 \text{ ր.}}$
Միոյ հանդերձապահի	100 ր.
Երկց ծառայից առ մին	$\frac{72 \text{ ր.}}{216 \text{ ր.}}$

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Աւագ վերակացուն, տնտեսն, երկու մանկածուքն, հանդերձապահն և ծառայք բնակին յուսումնարանին:

ԾԱՆՕԹ. Ի դէպս բացակայութեան Տեսչի պաշտօն նորա և տուեալ ի նմանէ պաշտօնական յանձնարարութիւնս կատարէ աւագ վերակացուն:

ԾԱՆՕԹ. Տեսուչն պարտի ունիլ զընակարան ի Գպրոցին, իսկ ի դէպս անյարմարութեան բնակարանի ի նմին, ստանայ զօրինազրեալ վարձադրամս վասն բնակարանի և զվառելափայտ: Տուչութիւն ուսկի վերոյգրեալ անձանց լինի ի վախճան իւրաքանչիւր ամսոց, զընդլի մատենին ըստ հաշուոյ յառանձին յօդուածս ստորագրութեամբ ի ներքոյ նոյա ստացողաց:

Յօդուած 67.

Ի վերայ հիման կոնդակի վեհափառ Կաթողիկոսին յ9 յունիսի 1861 ամի համարաւ 327, աղքատիկ որբք Հայոց յատկապէս ի Հոգևոր կոչմանէ պարտին սնանիլ ի նոյն լուկ Գըպրոցին ի հաշիւ նորին իբրև որդեգիրք:

Յօդուած 68.

Հողարարձութիւն Գպրոցին կազմէ ինքնին կամ վերագնէ զպատկեր ծախուց, ներկայացուցեալ ի տնտեսէ Գպրոցի, վասն սննդոյ որդեգրաց յառաջիկայ տարին և ձեռն արկանէ ի վազագոյն տնօրէնութիւն ըստ այնմ:

ԳԼՈՒԽ Զ.

Հաշուատուութիւն Գպրոցին

Յօդուած 69.

Ի կառավարութեան Գպրոցին պարտ է պահպանել զանվրէպ հաշիւս ըստ ուսումնական և տնտեսական մասանց:

Յօդուած 70.

Վասն հաշուատուութեան ըստ ուսումնական մասին և վարուց պարտ է ունիլ զտպագրեալ անուանական ցուցակս բոլոր աշակերտաց, յորս յիւրաքանչիւր ամսեան տեսուչ Գպրոցին պարտի նշանակնլ հանդէպ անուան իւրաքանչիւր աշակերտի ի գծի իւրաքանչիւր առարկայի ուսման զմիջին քաղուած նշանաթուոց, զորս ստացեալ է նա յուսուցչաց և զնշան վարուց:

Յօդուած 71.

Յամսական նշանաթուոց վասն իւրաքանչիւր աշակերտի

տեսուչն քաղէ ի վախճան ուսումնական տարւոյն զընդհանուր նշանակս և նշանակիէ ի նոյն օրինակ տարեկան ցուցակի:

Յօդուած 72.

Չայսպիսի տարեկան ցուցակս սխալաբան տեսուչն ստորագրութեամբ իւրով յերկուս հատորս, յորոց մին մնայ ի գործս Գալրոցին, իսկ միւսն առաջարկի ի Հոգաբարձութենէ Գլխաւորոցին ի Սինոդն Սրբոյ Եկեղեցի:

Յօդուած 73.

Վասն հաշուապահութեան ըստ տնտեսական մասին, Հոգաբարձութիւնն Գալրոցին տայ ում հարկն է առ իւրաքանչիւր նոր տարին հաշուեմատեանս, վաւերացուցմամբ երկուց անդամոց և հաշուապահին և կնքով Հոգաբարձութեան:

Յօդուած 74.

Ա. ըստ մտից:

1. Զմատեան մեծ վասն ընդհանուր եկամտից: Ի նմին զանձապահ Գալրոցին մուծանէ զամենայն գումարս, զորս ստանայ ինքն, ըստ ժամանակի մտանելոյ նոցա առանձին յօդուածովք համառօտ ցուցմամբ զտեսակ գումարաց, յետի կամ յնմե՛ն այնքով ստացեալք են, և որով համարու տուեալ է վասն նոցա ապահովագիր. ընդհանուր գումար այսր մատե-

նի լինի ցոյց ընդհանուր եկամտից Գալրոցին և հետեալ ի նմին հաշուատեսութեան:

2. Զմատեանս մտից յիւրաքանչիւր կալուածոց Գլխաւորոցին առանձին, որք տուեալ լինին կառավար, նշանակելով ի ճակատ իւրաքանչիւր մատենի գհամառօտ քաղուած կուեալ դաշնագրին: Յայնստիկ մատեանս մուծանին ըստ պատկանելոյն գումարք, ստացեալք ի կապալառուաց ըստ ժամանակի մտանելոյ նոցա, ցուցանելով ղյօդուած ի մեծի մատենին, յորում նոքա գրեալ են: Ընդհանուր գումար իւրաքանչիւր մատենի լինի ցոյց ուղղութեամբ կամ անուղղութեամբ մտանելոյ եկամտից յայնոցիկ կալուածոց:

3. Զմատեանս եկամտից յիւրաքանչիւր հաստատուն կամ անհաստատ աղբերաց առանձին: Յայնստիկ մատեանս մուծանին գումարք ըստ ժամանակի մտանելոյ նոցա, ցուցանելով ղյօդուած ի մեծի մատենին, յորում նոքա գրեալ են:

4. Զմատեանս անգորբազրոց. յայսմ մատենի պարտ է գրիլ առանձին յօդուածովք զլուծանգակութիւն տուեալ անշրրազրոց:

Յօդուած 75.

Բ. ըստ ծախուց:

1. Զմատեան վասն սահմանեալ բո՛նկաց ամենայն անձանց, եղևոց յուսումնարանին և ի կառավարութեան նորին, որք են՝ տեսուչ, անտես, ուսուցիչք, վերակայոցք, քարտուղարք քրատիւրք, ծառայք և այլն: Յայսմ մատենի զըլնն առանձին

յօղուածովք դումարք, որք տուեալ լինին ամսոյ յամիս իւրաքանչիւր անձին ըստ սահմանեալ կարգին, ստորագրութեամբ վասն ստացման այնոցիկ ընդ նոյն իսկ յօղուածովք:

2. Զմատեան վասն պահպանութեան տան Գպրոցին, յորում են առանձին յօղուածովք ծախք եղեալք վասն կահից, վառելեաց, լուսաւորութեան, ջրոյ և կարկառանաց շինուածոց, ստորագրութեամբ ընդ իւրաքանչիւր յօղուածով կապառուաց, վաճառողաց կամ բերողաց:

3. Զմատեան վասն ուսումնական նպաստից, յորում պարտին զրիլ առանձին յօղուածովք ամենայն գնեալ իրք ստորագրութեամբ վաճառողաց վասն ստացման պատկանեալ դրամոց:

4. Զընդհանուր մատեան վասն սննդոց որդեգրաց և ընդ նմին զառանձին տետրակս վասն իւրաքանչիւր որոշ ծախուց, այն է՝ հանդերձի, կերակրոյ, անկողնոյ, կարասեաց, պիտոյից խոհարանի և սեղանոյ, վառելեաց, լուսաւորութեան, և ծառայից: Յայտոսիկ տետրակս պարտին փոխադրիլ ըստ պատկանելոյն ամենայն յօղուածովք յընդհանուր մատենէն վասն ցուցանելոյ զգումարն ծախեալն առ իւրաքանչիւր մասն. ընդ յօղուածովք ընդհանուր մատենին պարտին լինիլ ստորագրութիւնք կապառուաց կամ վաճառողաց վասն ստացման պատկանեալ նոցա դրամոց:

Յօղուած 76.

Հոգաբարձութիւն Գպրոցին երկցս ի տարին, այն է ի 1

մայիսի, ի 1 Սեպտեմբերի, և, 3 Դեկտեմբերի կաղմէ զփոզովս ի Տեսչէ և յերկուց այլոց անդամոց իւրոց վասն ստուգելոյ դամենայն ժապարկեալ մատեանս, տուեալս գանձապետին, զդրամական գումարս և զնիւթական պատկանելիս Գպրոցին, որդեգրաց և ծառայից ըստ առաջարկեալ ընդհանուր ցուցակի գանձապետին:

Յօղուած 77.

Վերադննող ժողովն ստորագրէ դամենայն մատեանս, հաւաստի առնելով զայնմանէ, թէ եղիտ նա դամենայն ի կարգի և ուղղութեան կամ բացատրելով զգտեալ անուղղութիւնս, մուծանէ ի Հոգաբարձութիւնն զընկալեալ ի գանձապետէ ընդհանուր ցուցակն. զրելով ի նմին զայն, զոր ինչ գրեալ է ի ստուգութենէ մատենից:

Յօղուած 78.

Չբոլոր այսպիսի մատեանս մտից և ելից Գպրոցին, ի վախճան տարւոյս ներկայացուցանէ գանձապետն ի Հոգաբարձութիւն Գպրոցին հանդերձ ընդհանուր ցուցակաւ, յորում պարտին ցուցեալ լինիլ գումարք իւրաքանչիւր մատենի առանձին, ընդհանուր գումար բոլոր եկամտից և ընդհանուր գումար բոլոր ծախուց:

Յօղուած 79.

Հոգաբարձութիւն Գպրոցին առնէ զստուգութիւն բոլոր այնոցիկ մատենից ի մասին կարգաւ ի կիր արկանելոյ զայնս

և ճշգրտութեան կատարեալ դործոց և ղեկավարութենէ իւրմէ
առաջի առնէ Սինոզին Էջմիածնի ընդ ընդհանուր ցուցակին,
որ ստանայ ի գանձապետէն և զլրատճէն ցուցակին թողու առ
ինքն, զիսկական մատեանս տայ ի Գլխան Հոգարարձութեանն
ի պահպանութիւն

Յօդուած 80.

Յընթացս ժամանակի եթէ փորձք ցուցցեն զկարեորու
թիւն յաւելլոյ դնոր պարբերութիւնս յայսմ սահմանադրութեան,
պարտէ նախընտան զկիրառութիւնն, առաջարկել զայնմանէ ի
հաստատութիւն վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և
Սինոզի Սրբոյ Էջմիածնի.





Գինն է 15 կոպեկ:

2013

150/13

« Ազգային գրադարան



NL0057883

52.099



Գինն է 15 կոպեկ: